

Իրեն աշխատասէր ու իմաստուն ընկերը Լձմէ Պոնփլան՝ որն որ Լձմերիկայ թողուցեր էր, որպէս զի դեռ անստոյգ բաներուն վրայ տեղեկութիւններ առնէ ու նոր նոր բաներ քննէ, ասիկայ երբոր աս մտքով Փարակուայ կերթայ, հոն տեղի իշխանը կը բռնէ զինքը ու բանտ կը դնէ :

Լս բանիս լուրը երբոր Լարոպայ հասաւ, շատերուն մեծ ցաւ եղաւ, թէ այսպիսի արդիւնաւոր մարդ անպարտ տեղը բանտարկուի, ու մէկը մէկալը սկսան ասոր ճարը մտածել : Փարակուայի իշխանը լսելով թէ աս բանս եւրոպացւոց շատ ծանր եկեր է, վախցաւ որ չըլլայ թէ անոնց հետ թշնամանալով իրեն փնաս մը հասնի . ուստի Լձմէ Պոնփլանը բանտէն ազատեց ու հրամայեց որ Փարակուայէն դուրս ելլայ, որն որ մէկէն Լարոպա անցաւ հետը մէկ տեղ նոր նոր տեղեկութիւններ ու գրուածքներ բերելով :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Բ. Բնակարանի ընտրութիւն . — Խոհանոց ու իր կարասիները . — Խոհանոցի կարգ ու մարտարիւն :

ԼՂՈՒԾՈՒՏՔԻՒՄ հաշուէն ետեւ առջի հարկաւոր բանը բնակարանին կամ տան ընտրութիւնն է, որն որ պիտի նայիս որ քու ընտանեացդ գործոցը ու թուոյն յարմար, ծանօթներու ու բարեկամներու մօտ, ու օդին կողմանէ առողջ ու սրտաբաց, միանգամայն լաւ պաշտպանեալ ու կոկիկ ըլլայ . և թէ կարելի է հարաւային կամ արեւմտեան կողմը ըլլայ . աս ընտրութիւնս շատ մտադրութեամբ ընելու է, որովհետեւ նախ վատառողջ բնակարանը շատ տեսակ հիւանդութեանց պատճառ կ'ըլլայ, իսկ կարգաւորեալ բաժանմունք չունեցող տունն ալ նեղութիւն, անհամբերութիւն ու ժամանակի կորուստ

կը պատճառէ . իսկ երկուքը մէկ որ ըլլայ ծախուց վրայ ալ մեծ տարբերութիւն կ'ընէ, թէպէտ և բուն վարձը թէթեւ ալ ըլլայ : Լձմենէն աւելի անանկ տուն մը ընտրես որ երկայն ատեն հոն կարենաս բնակիլ, վասն զի փորձով ալ իրաւ ելած է Ֆրանքլինին ան խօսքը որ կ'ըսէ, Իրեք անգամ տուն փոխելը այնչափ սուղի կը նստի որչափ մէկ կրակ մը : Երկայն ատեն կեցած ու վարժած տանդ մէջ ամէն բան դիւրաւ կրնաս ընել, և ըրած նորոգութիւններդ կրնաս վայելել . և միանգամայն երկայն ատեն կեցած տեղոյդ հետ սիրտդ ալ կը կապուի աղուոր յիշատակներով . ուստի խրատ կուտամ որ տուն մը ամենայն կերպով քննելէն ու տեսնելէն առաջ չվարձես, բայց եթէ կարգէ դուրս կարօտութեան մը համար :

Տան մը առջի հարկաւոր բանը խոհանոցն է . նայէ որ գետինը աղիւսով կամ քարով պատած ըլլայ, որ երբեմն երբեմն կարենաս լուալ . ոչ շատ պզտի ըլլայ, այնպէս որ մէջը շարժելու ու կարասիքը դնելու տեղ չըլլայ, ու մուխը և հոտը ներս մնալով օդը ապականէ, և ամէն բան իր մասնաւոր տեղը չունենալով խառնափնդոր ու աղտոտ երեւոյն ու ծուխով պատերն ու պատուհանները սենան . և ոչ ալ այնչափ մեծ որ ծառայից նեղութիւն ըլլայ, ու չտաքնայ . բայց աս վերջինս աս աղէկութիւնը ունի որ լուացարանի համար ալ կը ծառայէ, որ շատ դիւրին ու շահաւոր կ'ըլլայ :

Խոհանոցին վառարանները գետնէն բարձր պէտք է ըլլան, որպէս զի շատ ծուելու ելելու պէտք չըլլայ . և միանգամայն ան վառարաններուն տակի կամ մարմնէն ոմանք կրնան ածուխ ու փայտ դնելու գործածուիլ, ոմանք ալ կերակուրները տաք պահելու, որոնք պնակով վառարանին քովը դրուելով՝ կրնան ճաթիլ ու կերակուրն ալ անհամբերել : Առարաններուն վրայի ծակերը այլ և այլ մեծութեամբ պէտք է ըլլան գործածուելու սաներուն ու պտուկներուն համեմատութեամբ . իսկ հովահրելու

ծակերը դիմացի կողմէն, որոնց ամէնքը պէտք է իրեն երկաթ դռնակներն ունենան, ինչպէս նաև վրայի ծակերը երկաթ թանաքէ խփոցներ : Ասանի վառարաններէն զատ որ քառանկիւն կ'ըլլան, պէտք է նաև ունենալ երկայն քառանկիւն վառարան մը ձուկ խաշելու համար, ասոր ալ խփոցը դրուելով կրնայ կասկարայի համար գործածուիլ նոյն տեղը : Այնորեղէնի համար պզտի փուռ մ'ալ ունենալը շատ հարկաւոր է . բայց անանկ շինուած պիտի ըլլայ որ ծուխը դուրս չգարնէ, ինչպէս նաև ծխնելուզինը . որովհետև ասիկայ չէ թէ միայն խոհանոցին մէջ աշխատողին նեղութիւն է, հապա նաև աղտոտութեան պատճառ . վասն զի ասով պատերն ու ապակիները կը դեղնին, կարասիքը սև մրով մը կը ծածկուին, և մուխը վանելու համար հարկ կ'ըլլայ ստէպ դռներն ու պատուհանները բանալ, որով շատ փայտ կը վառի ու տեղը չտաքնար . ածխէն ելած կազն ալ խոհանոցին մէջ տարածուելով ու կերակրոց մէջ մտնելով շատ ֆլասակար կ'ըլլայ : — Աս բանիս ճարը ամենէն առաջ վառարաններու վրայ ծածք մը շինելն է, որ վարի կողմը լայն ըլլայ ու երթալով նեղնայ ու ծխնելուզին հետ միանայ . երկրորդ ամբողջ վառարանդ պատուհանի մը դիմաց ըլլայ, այնպէս որ պատուհանն որ բանաս ածխին կազը առնէ տանի, կրակը ինքնիրմէն հովահրի, ու դուն ալ որոշ կարենաս տեսնել թէ որդեօք կերակրին եփոցը հասեր է թէ չէ . երրորդ թէ որ խոհանոցը անանկ շինուած ըլլայ որ վառարանդ անմիջապէս պատուհանին դիմացը չիյնայ, գոնէ նայիս որ լուսաւոր ըլլայ, և օդը փութելու համար հողմադարձ գործիք մը հաստատէ . չորրորդ ճարն ալ երբեմն երբեմն ծխնելոյզը մաքրել տալն է . վասն զի շատ անգամ ձանձախտարի թով ու մամկի բոյներով լեցուելուն ծուխին ելլելուն արգելք կ'ըլլայ, ու ներս կը զարնէ . ասով ծխնելուզին բւրնկէլէն ալ ազատ կ'ըլլաս, որ շատ անգամ մեծ կրակներու պատճառ եղած է : — Ա եր

ջի ատեններս շատ տեսակ շարժական վառարաններ հնարուեցան, որ քիչ ժամանակի մէջ ու քիչ կրակով կերակուրները կ'եփեն . ասոնց մէջ ամենէն աղէկներն հարէլի, լըմարի ու տ'Արսէի գտածներն են :

Շատ հարկաւոր բան է որ խոհանոցին մէջ ամէն բան իր յատուկ գործիքն ունենայ, մէյմը որ շատ մեծ ծախքի բաներ չեն, երկրորդ որ ուզած բանդ կրնաս դիւրաւ ու քիչ ժամանակի մէջ ընել և աղէկ ընել . անոր համար աչք ունեցիր որ ամէն բան իրեն յատուկ գործիքովը շինուի, և ձեռքի եկած բանը ուզած բանին չգործածուի . զոր օրինակ հացը կ'ուզես կարմրցնել ունելիքի վրայ կը դնես, ունելիքը կը տաքնայ չըռնուիր, հացը կ'իյնայ կ'այրի կը մրկի կամ մոխիրով կ'աղտոտի, թող որ աս կերպով քանի մը շերտ հազիւ կրնաս կարմրցնել . ասոր տեղը հաց կարմրցնելու կասկարայ մ'որ ունենաս աւելի դիւրաւ ու աղէկ կ'ընես . ինձոր կամ որ և իցէ պտուղ եփելու համար ալ փոխանակ մոխրին մէջը թաղելու, կրնաս այսպիսի գործիք մը շինել տալ, այսինքն երկու ծեծած երկթէ կլորկեկ ափսէներ կեդրոնէն մէկ առանցքի վրայ կեցած, ասոնց երկուքին մէջ տեղը կը դնես ուզած պտուղներդ ու երբ մէկ կողմերնին կ'եփի վրայի ափսէն դարձընելուդ, մէջի պտուղներն ալ կը զլորին կը դառնան ու բոլորն ալ հաւասարապէս կ'եփին : Շատերը աղցանը լուսէն ետև ցամքեցնելու համար հաստ կտաւի մէջ կը դնեն ու կը ցնցեն, բայց աւելի լաւ է ցանցառ սապատ մը ունենալը, որուն մէջը դնելով ջուրն ինքնիրեն կը քամուի . աղէկ է որ երկաթ թելով հիւսած ըլլայ որ հոտ ու աղտ չընէ, ու ամէն մէկ գործածելուդ լաւ մը սրբէ որ չժանդոտի : — Ամանապէս կասկարայներն ալ այլևայլ մեծութեամբ ու այլևայլ ցանցառութեամբ պիտի ըլլան, այսինքն ամենուն մատերը հաւասար հեռաւորութեամբ պէտք չէ ըլլայ, հապա ոմանք լայն, ոմանք նեղ որ նիւթին յարմարը գործածես : — Ամանա

պէս քամոյցներն ու մաղերն ալ նիւթին յարմար պիտի ըլլան թէ ծակերուն մեծութեամբը, և թէ մետաղէ, ձարէ կամ մետաքսէ ըլլալովը : — Խոհանոցին հարկաւոր գործիքներէն մէկն ալ տեսակ տեսակ խմորներու, անուշեղէններու ու փխտիներու կաղպարներն են, որոնցմով շատ անգամ սովորական հարկինք մը աւելի հաճոյական կերպ մը կ'առնէ, ինչպէս արգանակի փխտին, պտուղներու հոյզերը որ քիչ մը ձկան սոսինձով՝ աղուոր ձևերով ու անվնաս գոյներով սեղանի մեծ զարդ կ'ըլլան : Եւ այս նայելու է որ աս կաղպարները պղնձէ չըլլան, վասն զի շուտով ժանգառ կը կապեն որ սաստիկ թոյն է, դժուար ալ կը մաքրուին, մանաւանդ երբ վրայի զարդերն շատ ճղճղած ըլլան. անոր աղէկը փայտէ, անագէ ու թանագէ շինուածներն են. որոնք ամէն մէկ գործածելուդ պէտք է լաւ մը մաքրես : — Սաներուն ու պտուկներուն վըրայ խօսքս չեմ ուզեր երկնցընել, ամենուն յայտնի բաներ ըլլալուն. միայն առջինները պէտք է ստեպ անագազօծել, ետքիններուն ալ կանաչ ապիկածներէն զգուշանալ : — Խոհանոցին մէջ պէտք է ունենալ նաև ամէն նիւթի զատ զատ սանդեր, ինչպէս խաչվէի, շաքարի, չոքուածի, աղի, խոտեղէն ընդեղէններու, պտղեղէններու ու մսեղէններու. ասոնցմով այլևայլ նիւթեր ձգմէն ու մզելն աւելի դիւրին ու լաւ կ'ըլլայ, քան թէ ձեռքով կամ ուրիշ գործիքներով, որ շատ անգամ աղտոտութեան պատճառ են. սանդի մէջ ծեծելով որ և իցէ նիւթին ներքին համն ու անուշահոտութիւնը աւելի դուրս կ'ելլէ քան թէ գլաններով կամ աղօրիքներով, ինչպէս որ յայտնի կ'երևայ խաչուէին վրայ :

Խոհանոցի կարասիքներն պէտք է ամենայն կերպով մաքուր պահուին. լուարու ջնջոյն ու սպունգը երբեմն երբեմն քացախի մէջ խոթելու է որ չհօտի. գաւաթներն ջրով ու հաւկթի կեղևով շփելու է. սաներն սպիտակադեղով. խոհանոցին սեղանները սև սա-

պոնով, փոթասով կամ մոխրով. թանագէ անօթներն ու կաղպարները ածխի փոշիով ու մոխրով քիչ մը ձէթ դնելով մէջը. սղնձէ քամոյցները ածխի կտորով, դանակներն ու պատառաքաղները աւազով, բայց սոխ, սրխտոր, պրաս կտրած դանակներն զատ դնելու ու մաքրելու է որ ուրիշներն ալ չհոտեցնեն : — Խոհանոցին մօտ մութ ու զով տեղ մը ունենալն շատ հարկաւոր է միս, ձուկ ու եփած կերակուրներ պահելու համար :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԲԱՌՕՏ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Դ.

Ձրոյ վրայ :

ՉՈՒՐԸ անհոտ անգոյն հեղանիւթ մըն է, իրեն բաղադրութիւնն է 1 թըթուածին ու 2 ջրածին. ջերմութեամբ կընդարձակի ու ցրտութեամբ կը խտանայ. բայց աս փոփոխութիւններս ուրիշ մարմիններէ տարբեր է. զուտ ջրին ամենէն շատ խտութեան չափն է հարիւրամասն ջերմաչափին 4^{էն} վրայ եղած ատենը, իսկ աս աստիճանէն թէ վար թէ վեր եղած ժամանակ կ'ընդարձակի : ՉՐին խտութիւնը ուրիշ խտութեանց համեմատութեան եզրն է, և միութեան չափն է մէկ հարիւրորդամետր խորանարդը 0, 76 ու 4^ւ ճնշման տակ :

ՉՐին մէջ միշտ չափով մը օդ խառնուած է, մէջի եղած գործարանաւոր կենդանեաց կեանքը պահելու համար, որ է սովորաբար ջրին 1/35. և աս օդը շատ աւելի թթուածին ունի քան թէ մթնոլորտին օդը, այսինքն 68 անկէնդան և 32 թթուածին, որ է ըսել 1/3 :

ՉՐին մէջ բաց 'ի օդէն դեռ ուրիշ շատ տեսակ նիւթեր լուծուած կը գտուին, ինչպէս աղեր ու թթուներ, որով բնութեան մէջ զուտ ջուր չգը-